դանութեան ժամանակ գործակից էր նորան Ներսէսը, այնպէս էլ սորա օգնականն էր Եսային վարդապետական աստիճանով, որ, Տարօնից աշակերտել էր, հետեւելով Քաջբերունեաց և Արարատեան գաւառների շրջագայութեան ժամանակ։ Մեծ վարդապետարաններն ունէին մէկից աւելի, առնուազն երկու ուսուցչապետներ, ինչպէս շարունակ տեսնում ենք Գլաձորի ամբողջ գոյութեան շրջանում։

Նչեցու անկախ գործունէութեան տարիներից տեղեկութիւն չունինք մինչև 1291 *թիւը. իսկ այնուհետև, գրեթէ, անընդհատ հետևել կարող ենք նորա կեանքի և դպրոցի ընթացքին մինչև վերջ։ Նչեցու գործունէութիւնը երեք մասի կարելի է բաժանել, դպրոցական, եկեղեցական և մատենագրական-գիտական. առաջինի հետ կապուած են գրչութեան արուեստի մէջ նորա կատարած մեծ ծառայութիւնները, իսկ եկեղեցականի հետ մատենագրականի մի մասը։ Փորձենք ամփոփել այդ երեք կէտերի մէջ այս բազմաշխատ վաստակաւորի և նորա հետ կապուած դպրոցի կատարած գործը։*



Պատկեր 201.

Յովասափ գրչի ձեռքով 1291 *թուին գրուած է Գէորգ Լամբրոնացու Գործք Առաքելոցի մեկնութիւնը, որ հեղինակը գրել է Յովհաննէս արքայեղբոր խնդիրքով. ստացողն է Եսայի վարդապետը.* 28բ *«Տր. ԱՃ Յս. Քս. բարէխաւսութբ. ՜Ծ սրբոց ողորմեա բազմարարի բարունոյն Եսաեա, ստացողի սորա եւ բազմաբիծ ծրողին, ամէն»։ Կան եւ ուրիշ բազմաթիւ փոքր յիշատակարաններ* (32ա, 37ա, 41բ, 45ա, 58ա, 66բ, 70բ, 76ա, 84ա, 119բ, 149բ, 154, 167ա, 170բ, 173ա, 183ա, 186բ, 190ա, 193ա, 197բ, 218ա), *որոնց մէջ Եսային կոչուած է «բազմարարի, ՜Ծածուծ և սրբազան վարդապետ»։ Գլխաւոր յիշատակարանից* 217ա *տեղեկանում ենք, որ ձեռագիրը գրուած է «ի թուիս հայոց ՉԽԱ.», «ձեռամբ գրասէր,*

մանց», որի վերջում գրուած է՝ «Եսայի վարդապետին է գիրքս»։ Սրան կցուած են փիլոնի «Որ յեղան են յեգիպտոսէ» և «Յաղագս քահանայութեան», բայց տարբեր և անյայտ գրչի ձեռքով. վերջից թերթ է ընկած։ Նչեցին իր ձեռքով սրբագրութիւններ ունի երեք մասերում էլ։ Դժուար է պարզել, թէ սրբագրութիւններն էլ գրչութեան ժամանակից են. այդ դէպքում պէտք է ընդունել, որ Նչեցին իր ուսուցիչ Ներսէսի հետ 1274 թուին դեռ եւս արևելեան Հայաստանումն էր և այդ կամ հետևեալ տարին փոխադրուել Մուշի Առաքելոց վանքը և այնտեղ մնացել մինչև 1280 թիւը։

բազմաբիծ և յոքնամեղ Յովասափի», «հրամանաւ և արդեամբք . . . գերափառ և հրաշագեղ ոգի մեծ րաբունապետին ՅԵսաեա», յիշատակ «հոգևոր ծնողին և ՜Ծածազարդ մեծ վդ.ին Ներսիսի, փոխեցելոյն առ Քս.»։ Կոկողն է Տիրացու անունով մէկը, որ և իւր համառօտ յիշատակութիւնն ունի. «զՏիրացու, որ բովանդակ զքարտէզս կոկեցի, յիշեցէք ի բարի» (Յաւել. Բ. 73, պatk. 202)(*)։

Գրիգոր Նիւսացու մարդակազմութեան մի անթուական յիշատակարանի մէջ(**), ոչ անեղծ հասած մեր ձեռքը, կայ հետևեալը. «հրամանաւ Շարազանպարցի(?) զգերաբուն դրախտս պէս պէս որակ պտղովք ի զմայլումն իմաստից, ճմլեալ ի խոհեմական իմաստս բանասիրաց, լուսափայլ տեսչութբ. յիսկականն լոյս. յորմէ ճաշակ և ճաշակօղ վերաբերիլ յիմանալի ստեղունսն ի փառս միակին զվերասացեալ հրաբունի վարժապետս իմ Եսայի հանդերձ ծնողօք և ազգայնօք անմոռաց մաղթել զիսկն բան, յորմէ թողութիւն. վերայաւելու աստ և ի հանդերձեալն»։ Սորան անմիջապէս կցուած է մի անյայտ գրչի (անուան տեղը բաց) յաւելուած նկատողութիւնը. «եւ զիմ Յովհաննէս արքայեղբայր Հայոց Հեթմոյ յիշել առաջին կենեղուտ պատգին.»։ Եթէ կենդանի էր Յովհաննէս արքայեղբայրը, որի աշակերտներից մէկը ընկել էր Գլաձոր, ձեռագրի ծագումը պէտք է նշանակենք 1293 *թուականներից առաջ (***)։*

Սիսականի մէջ Ալիշանը բերում է կաթուղիկեայց թղթերի մի նոյնատիպ յիշատակարան Յովհաննէս գրչի կողմից, «ի մենաստանս, որ կոչի Աղբերց վանս եւ մականուն Գլաձոր», «ի վարժապետութիս. գիտնական եւ արգինական մեծ հռետորի յԵսաս» (s!), *«ի թուիս ՉԽ» (****)։*

Յովհաննէս անունով գրչի ձեռքով 1297/8 *թուին գրուել է Պիտոյից գիրքը՝ «ի դառն և ի դժնեայ ժմկիս., յորում խստագոյն տիրէր լուծ այլասեռիցն ի վերա քրիստոնէից, եւ առաւել ի վր. շինուածոց եկեղեցեաց, զորս բազումս քակեալ և աւար հարեալ անպիտանացուցին» (*****)։ Արդեօ՞ք սա նոյն է Յով-*

(*) *Ձեռ. էջմ. №* 1369/1363, *կաշէկազմ,* $24\frac{1}{2} \times 17 \times 5\frac{1}{2}$ *սմ. մեծութեամբ, գրուած շեղագրին մօտեցող բոլորագրով, երկսիւն՝ իւրաքանչիւրը* $21{,}4 \times 6{,}2$ *սմ., թուղթ, թերթի մեծութիւն* $25{,}2 \times 17$ *սմ., ամբողջը* 218 *թերթից բաղկացած, պինդ և լաւ կոկած. նմանահանութիւնը տես և մեր Քարտէզ հայ հնագրութեան* § 106, *Տախտ. Հ։*

(**) *Ձեռ. էջմ. Գ. ց. №* 138/2509, 198բ։

(***) *Ըստ Ալիշանի, Սիսուան,* 147, *Յովհաննէս արքայեղբայր մեռել է* 1288 *թ., բայց կարծում ենք սխալւում է. Վահրամ գրիչ ՉԽԲ* (= 1293) *թուին խնդրում է յիշել «տն. Յոհաննիսի եղբաւր արքային Հայոց Հեթմոյ, ուսուցչին մերոյ և քահանա ձեռնադրաւղին» առանց մահուան ակնարկութեան. Ձեռ. Երուսաղէմ* 2612/57։

(****) *Սիսական,* 131։ *Ամբատեան, Երնջակ,* 157, 163։

(*****) *Ալիշան, Սիսական,* 133 *նմանահանութեամբ. Նրանից առել է Ամբատեան, Երնջակ,* 157։ *Գրեթէ նոյն բառերով է նկարագրում Օրբէլեանը ժամանակի հալածանքը, Օրբ.* 472/3։